Ազգ
Azg armenian daily
17 ԱՊՐԻԼ 2001 ԵՐԵՔՇԱԲԹԻ 70 (2274)

# Ռուսաստանը հուսով է, որ ղարաբաղյան հակամարտությունը կկարգավորվի

*Ասել է Իգոր Իվանովը*

ՄՈՍԿՎԱ, 16 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանը կշարունակի բանակցությունները Հայաստանի եւ Ադրբեջանի հետ եւ հուսով է, որ ղարաբաղյան հակամարտությունը կկարգավորվի: Ինչպես հաղորդում է ՌԻԱ-Նովոստին, այդ մասին հայտարարել է Ռուսաստանի արտգործնախարար Իգոր Իվանովը՝ ելույթ ունենալով Պետդումայի միջազգային կոմիտեի նիստում: Նախարարի խոսքերով ասած, առաջխաղացում է ծեռք բերվել Ադրբեջանի հետ Ռուսաստանի հարաբերություններում, իսկ Հայաստանի հետ հաստատվում են դաշնակցային հարաբերություններ:

«Ադրբեջանի եւ Հայաստանի հետ բանակցությունները շարունակելու միջոցով մենք հույս ունենք հասնել ղարաբաղյան հակամարտության կարգավորման», ասել է Իգոր Իվանովը:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

# Քիվեսթյան բանակցությունները գոհացրել են Հ. Ալիեւին

*«Նյու Յորք թայմսը» իր խմբագրականում անդրադարձել է Բուշի «կասպյան դիվանագիտությանը»*

**ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ**



Ամերիկյան ազդեցիկ «Նյու Յորք թայմս» օրաթերթը ապրիլի 16-ի խմբագրականը նվիրել է ԱՄՆ նախագահ Բուշի կասպյան դիվանագիտությանը. «Չնայած Բուշին զայրացնում է իր նախորդի օտար հակամարտությունները լուծել փորձելու խանդավառությունը, վերջերս նա հանդիպեց Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին: Լեռնային Ղարաբաղի բանակցություններում ներգրավվելով՝ պրն Բուշը, անկասկած, հետաքրքրված է Կասպիցի տարածաշրջանի նավթի եւ գազի պաշարներով»:

«Վերջին բանակցություններում կողմերը բախվեցին ԼՂ իրավական կարգավիճակի խնդրին: Ալիեւն ասում է, թե շրջանին կտա լայն ինքնավարություն, եթե մնա Ադրբեջանի կազմում: Հայաստանը եւ ԼՂ-ն անկլավի համար անկախություն են ուզում: Բուշի վարչակազմի որոշ պաշտոնյաներ լավատես են, որ Հայաստանը կարող է դառնալ զիջող: Նրանք հույս են հայտնում, թե նախագահ Քոչարյանը, ծնունդով ղարաբաղցի, որ եղել է անկլավի առաջնորդը, կարող է հայերին, հատկապես ուժեղ զինվորականությանը համոզել՝ հրաժարվելու անկախության պահանջներից», գրում է թերթը, չհիմնավորելով իր պնդումները:

«Նյու Յորք թայմսը» Բուշի՝ ԼՂ հակամարտության կարգավորման մեջ ներգրավվելու գլխավոր պատճառը Կասպիցի նավթն է համարում, մասնավորապես խողովակաշարի կառուցումը, որով ադրբեջանական նավթը կտեղափոխվի Արեւմուտք՝ շրջանցելով Ռուսաստանի տարածքը: «Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող տարածաշրջանում, որտեղ ուժեղ են բրիտանական եւ ֆրանսիական նավթային ընկերությունների դիրքերը, պրն Բուշը, անկասկած, հույս ունի մեծացնել ամերիկյան ազդեցությունը», եզրափակում է թերթը:

Տես ➧ էջ 2

ԱՄՆ

## Արշավ ի նպաստ ցեղասպանության ճանաչման

Ինտերնետային ցանցով ստացված տեղեկությունը հաղորդում է, որ Արեւելյան Մասաչուսեթսի Հայ դատի ազգային հանձնախումբը (ԱՄ ՀԴԱՀ) մարտ-ապրիլ ամիսներին ձեռնամուխ է եղել հետեւողական մի արշավի՝ ի նպաստ ցեղասպանության ճանաչման: Հանձնախմբի անդամներն այդ տարածաշրջանի մեծ ու փոքր քաղաքների պաշտոնական անձանց հետ շփումներ են անցկացրել՝ հորդորելով ապրիլի 24-ը հռչակել հայ նահատակների հիշատակի օր: Մինչեւ ապրիլի 10-ը Բոստոն, Ուիթման, Նյուտոն, Ուեյքֆիլդ, Տրուրո, Առլինգտոն, Բրուքլին եւ Նորֆոլք քաղաքներն արդեն իսկ հրապարակել են այդ առնչությամբ համապատասխան որոշումներ: Ակնկալվում է, որ Արեւելյան Մասաչուսեթսի հինգ կոնգրեսական շրջաններից մեծ թվով այլ քաղաքներ հետեւեն մյուսների օրինակին:

Նախատեսված է ապրիլի 20-ին Մասաչուսեթսի նահանգային կառավարական տան ներկայացուցիչների պալատում անցկացնել Հայոց ցեղասպանությանը նվիրված տարեկան հիշատակի միջոցառում: Մասաչուսեթսի բոլոր 10 կոնգրեսական ներկայացուցիչները ցարդ նեցուկ են կանգնել Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւին: Իսկ վերջերս նրանք նամակով դիմել են նորընտիր նախագահ Ջորջ Բուշին՝ կոչ անելով կատարել հայոց կոտորածները ցեղասպանություն ճանաչելու նախընտրական խոստումը: Հ. Ծ.

## 1700-ամյակի հանդիսություն Կրեմլի մեծ դահլիճում

ԵՐԵՎԱՆ, 16 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ապրիլի 21-23-ը Մոսկվայի Կրեմլի մեծ դահլիճում տեղի կունենա միջոցառում՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակին, ներկայությամբ Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսի: Ինչպես հայտնեցին ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչությունից, միջոցառմանը կմասնակցեն նաեւ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը եւ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովի նախագահ Վահան Հովհաննիսյանը:

## Հոկտեմբերի 27-ի քր. գործից անջատված մասով ոչ մի վարկած չի հերքվել

ԵՐԵՎԱՆ, 16 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ զինդատախազությունը շարունակում է հոկտեմբերի 27-ի քրեական գործից անջատված մասի նախաքննությունը, կատարվում են քննչական գործողություններ: Նախաքննությամբ առայժմ չի հերքվել ոչ մի վարկած (ստուգվում է 4-5-ը): Ինչպես ասաց զինդատախազության քննչական բաժնի պետ Արտակ Հարությունյանը, քր.գործից անջատված մասով Նաիրի Հունանյանը դեռ չի հարցաքննվել: Քննչական խմբի ղեկավարը նշեց, որ նախաքննական մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է հարցաքննել ինչպես Հունանյանին, այնպես է ահաբեկչության մյուս մասնակիցներին:

Հիշեցնենք, որ գործից անջատված մասն առնչվում է հնարավոր օժանդակությանը, դրդչությանը, ապօրինի զենքին, հանցագործության կատարմանը պաշտոնատար անձանց հնարավոր մասնակցությանը, պաշտոնատար այլ անձանց իրենց պաշտոնեական պարտականությունների նկատմամբ թույլատրած անփույթ վերաբերմունքին:

ԲԱՔՈՒ-ՋԵՅՀԱՆ

## Մինչեւ առուն նավթ գա...

ՄՈՍԿՎԱ, 16 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Մինչեւ 2015 թվականը նավթի իրական ծավալներ չեն լինի Բաքու-Ջեյհան խողովակաշարի լիաբեռնման համար», ճեպասուլիսում հայտարարել է ՌԴ արտաքին գործերի փոխնախարար, Ռուսաստանի նախագահի Կասպիցի հարցերով հատուկ ներկայացուցիչ Վիկտոր Կալյուժնին: Ըստ նրա, «Բաքու-Ջեյհան խողովակաշարի նախագիծը հեռավոր հեռանկար է»: Ինչպես հաղորդում է Էմ Փի Էյ գործակալությունը, Կալյուժնին նշել է, որ գոյություն ունի Թենգիզ-Նովոռոսիյսկ այլընտրանքային երթուղին, որի ղազախական հատվածը բեռնված է նավթով: Նախագահ Պուտինի հատուկ ներկայացուցչի կարծիքով, Ռուսաստանին հարկավոր է պայմաններ ստեղծել՝ առավելագույնս բարենպաստ Կասպից ծովի տարածաշրջանից Ռուսաստանի տարածքով նավթի արտահանական առաքումների գործող փոխադրական համակարգի առավելագույն բեռնման համար, այդ թվում ստեղծել ճկուն սակագնային քաղաքականություն:

Անդրադառնալով Բոսֆորի խնդրին, Կալյուժնին ընդգծել է, որ Ռուսաստանը կողմնակից է ցանկացած նախագծի անվտանգությանը, այդ թվում Սեւ ծովից Բոսֆորի նեղուցով նավթով բեռնված հեղուկանավերի անվտանգ անցման հարցում: Թուրքիայի ղեկավարությանը, ընդգծել է ռուս դիվանագետը, անհրաժեշտ է ապահովել Բոսֆորով հեղուկանավերի անցման անվտանգությունը:

ԹՈՒՐՔԻԱ

## Բարեփոխումների համար անհրաժեշտ է առնվազն 12 միլիարդ դոլար

ԱՆԿԱՐԱ, 16 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ-ն ու ՄԱՀ-ն ողջունել են խորը ճգնաժամի մեջ գտնվող Թուրքիայի ազգային տնտեսության բարեփոխման կառավարության ծրագիրը: ՄԱՀ ներկայացուցիչն ասել է, թե առաջնահերթ միջոցառումների այդ ծրագիրը համաձայնեցված է միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ եւ նպատակ ունի կայունացնելու թուրքական ազգային արժույթը լիրան, որի փոխարժեքը դոլարի համեմատ երկու ամսում կտրուկ նվազել է: Ծրագրով նախատեսված է նաեւ պետբյուջեի ծախսերի կրճատում, սեփականաշնորհման տեմպերի արագացում եւ երկրի բանկային համակարգի վերակազմավորում: Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Քեմալ Դերվիշը սակայն հայտարարել է, թե բարեփոխումների հաջողության համար Թուրքիան առնվազն 12 մլրդ. դոլարի արտասահմանյան ֆինանսական օգնության կարիք ունի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ
ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
**Մեծ եղեռնի 86-ամյակին նվիրված երեկո**

Բացման խոսք — ՀՌԱԿ ատենապետ **ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**
Խոսք օրհնության — Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ**
Օրվա բանախոս — ՌԱԿ փոխատենապետ, ԵՊՀ պատվավոր դոկտոր **ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**
Հանրային ռադիոյի Գեւորգ Անեմյանի անվան ջութակահարների անսամբլ, գեղարվեստական ղեկավար **ԱՆԱՀԻՏ ԱՆԵՄՅԱՆ**
Նվագակցում է — **ԱՆՆԱ ԱՆԵՄՅԱՆԸ**
Մեներգչուհի — միջազգային մրցույթների դափնեկիր **ԱՆՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ**
Ասմունքող — ՀՀ վաստակավոր արտիստուհի **ՎԵՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ**
Տեղի կունենա ապրիլի 18-ին, ժամը 19:00-ին, Թեքեյան կենտրոնում:
*Մուտքն ազատ է:*

